է որպես անհրաժեշտ, հիմնական շարադրանքը նախապատրաստող, բայց նաև նրանից որոշակիորեն առանձնացող միավոր»[10]: Հավելենք, որ այդ մուտքային կամ առաջաբանային հղացքում Դավրիժեցին ամենակարճառոտներից ու նպատակասլացներից մեկն է հայ պատմագրության մեջ:

Իր պատմագրքի կառուցվածքում, ինչպես տեսանք, Դավրիժեցին ամենից առաջ կարևորել է գլուխների բաժանումն ու ժամանակագրական կարգը: Գլուխները, որպես կանոն, ընդգրկում են ընդհանուր պատմության մասնավոր, բայց ամբողջական դրվագ: Միայն երբեմն, երբ այդ մասնավորությունն ընդունում է նախատեսվածից մեծ տեքստային ծավալ կամ զարգանում է այլ երանգավորումներով, Դավրիժեցին հարկ է համարում նոր, շարունակող գլուխ հավելել, ընդ որում՝ շատ հաճախ հավելյալ գլխի վերնագիրը պահպանում է նախընթաց գլխի վերնագրի հիմնական միավորները: Այդ կերպ՝ Դավրիժեցին, այսպես ասած՝ «կիսել» է իր պատմագրքի Թ և Ժ գլուխները՝ դրանցից առաջինն ունի «Թէ որպիսի պատճառանօք կոչեաց Շահաբաս զթագաւորն Վրաց առ ինքն և հնարիւք դաւեաց զնոսա», իսկ երկրորդը՝ «Միւս ևս պատմութիւն դաւաճանութեան Շահաբասին, զոր միւսանգամ արար ընդ թագաւորին Վրաց» վերնագիրը, ինչպես նաև ԺԳ և ԺԴ գլուխները՝ առաջինի վերնագիրն է «Պատմութիւն նեղութեանց՝ զորս կրեցին ազգն Հայոց յառաջին Շահաբաս թագաւորէն», երկրորդինը՝ «Միւս ևս պատմութիւն նեղութեանց՝ զոր կրեցին ազգն Հայոց յառաջնոյ Շահաբաս թագաւորէն», և այլն:

Գլուխների առումով պետք է ուշադրություն դարձնել դրանց վերնագրային պոետիկային: Վերնագրերը ոչ միայն ներքին բովանդակության պարագրկումներ են ու ընդհանրական ցուցիչներ, այլև շատ հաճախ հանդես են գալիս իբրև ժանրանվանումներ ու

---

[10] ***Աշոտ Սարգսյան,*** Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Երևան, 1991, էջ 55: